Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունվարի 23-ի N 76 - Ն որոշման

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն՝ N 1 հավելվածում օգտագործվում է հետևյալ հասկացությունը՝

1) **զբոսաշրջային օպերատորի ղեկավար**՝ զբոսաշրջային օպերատորի խորհրդի նախագահը, խորհրդի անդամները, գործադիր մարմնի ղեկավարը, նրա տեղակալները:

2. Զբոսաշրջային օպերատորի ղեկավարի աշխատանք կատարելու (կամ ծառայություն մատուցելու) փորձը կամ աշխատանքային փորձը հաստատվում է պայմանագրերի, աշխատանքային գրքույկի կամ իրավասու մարմիններից ստացված տեղեկանքների, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտում որակավորում, վերապատրաստում, սերտիֆիկացում կամ այլ համարժեք հավաստագրում իրականացնող սուբյեկտների կողմից տրված երաշխավորագրերի կամ ղեկավարի գործառույթներ կատարելու մասին փաստաթղթեր ներկայացնելու միջոցով:

2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ «տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» (այսուհետ՝ ՏԳՄԴ) N (ԷՆ) խմբի 79.12 կոդով զբոսաշրջային օպերատորի գործունեություն իրականացնելու համար «Գործունեության իրականացման ծանուցման մասին» և «Զբոսաշրջության մասին» օրենքներով զբոսաշրջային օպերատոր ծանուցած իրավաբանական անձի կողմից զբոսաշրջային ծառայությունները մատուցվում, իրացվում կամ առաջարկվում են՝

1) եթե ծանուցող զբոսաշրջային գործունեության սուբյեկտի գործադիր մարմնի ղեկավարը, իսկ կոլեգիալ գործադիր մարմնի դեպքում՝ կոլեգիալ գործադիր մարմնի անդամները կամ վերջինիս նշանակելու, իսկ կոլեգիալ գործադիր մարմնի

դեպքում՝ այն ձևավորելու իրավասություն ունեցող ծանուցող զբոսաշրջային գործունեության սուբյեկտի մարմնի անդամները վերջիններիս մասին իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցում կատարելու պահին ունի (ունեն) որևէ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի հետ կամ վերջինիս օգտին աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրով զբոսաշրջային ծառայությունների մատուցմանն ուղղված աշխատանք կատարելու կամ ծառայություն մատուցելու նվազագույնը 3 տարվա աշխատանքային ստաժ կամ աշխատանք կատարելու (կամ ծառայություն մատուցելու) փորձ կամ ունի (ունեն) զբոսաշրջության ոլորտի բարձրագույն կամ միջին մասնագիտական կամ այլ ոլորտի բարձրագույն կրթություն.

2) երբ առցանց եղանակով զբոսաշրջային ծառայություններ մատուցելիս, իրացնելիս և առաջարկելիս առկա է մշտապես թարմացված գործող ինտերնետային կայք, որն առնվազն պետք է՝

ա. հասանելի լինի հայերենով,

բ. յուրաքանչյուր էջի վրա տեսանելի մասում պարունակի նշում էջի թարմացման տարվա, ամսի և ամսաթվի մասին,

գ. առանձնացված բաժնում ներառի տեղեկություններ զբոսաշրջային օպերատորի ֆիրմային անվանման, հարկ վճարողի հաշվառման հասցեի, հարկ վճարողի հաշվառման համարի, բանկային վավերապայմանների, գրասենյակի հասցեի, կառավարման մարմինների և դրանց անդամների վերաբերյալ,

դ. զբոսաշրջային օպերատորի կողմից առաջարկվող զբոսաշրջային փաթեթների, տուրերի կամ այլ առանձին զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնի՝ ենթաբաժիններում առանձնացնելով ներգնա, արտագնա կամ ներքին զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ վերաբերելիության,

ե. պարունակի նշում զբոսաշրջային օպերատորի հեռախոսահամարի կամ վերջինիս կողմից կարգաբերվող և տնօրինվող էլեկտրոնային հավելվածների կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով զբոսաշրջային օպերատորի հետ առցանց կապի հասանելիություն ապահովող հասցեների (հղումների) մասին,

զ. պարունակի նշում առցանց հայտերի ներկայացման և զբոսաշրջային օպերատորի կողմից դրանց հետագա հաստատման միջոցով կամ պաշտոնական էլեկտրոնային ստորագրության միջոցով զբոսաշրջային փաթեթի պայմանագիր կնքելու հնարավորության մասին (առկայության դեպքում),

է. առանձնացված բաժնում զետեղի սպառողի հետ կնքվող արտագնա զբոսաշրջության հետ կապված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի օրինակելի ձևը (առկայության դեպքում),

ը. սույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածին համապատասխան մշակված կանոնների հայերեն օրինակը՝ ինտերնետային կայքի հասանելիությունն ապահովող այլ լեզուներով թարգմանության զուգակցմամբ,

թ. ունենա հղում զբոսաշրջության բնագավառում պետական լիազոր մարմնի կայքի այն էջին, որի միջոցով կարող են ներկայացվել բողոքներ.

3) երբ բացի գործադիր մարմնից՝ մշտապես առկա է անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով նվազագույնը մեկ աշխատող:

4. Եթե զբոսաշրջային ծառայությունների մասին տեղեկատվությունը սպառողին հասանելի է դարձվում ինտերնետային կայքի միջոցով՝ առանց առցանց եղանակով զբոսաշրջային ծառայություններ մատուցելու կամ իրացնելու մտադրության կամ հնարավորության, զբոսաշրջային օպերատորի ինտերնետային կայքը պետք է մշտապես թարմացվի և բավարարի սույն՝ N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ե»-«է» պարբերություններով սահմանված պահանջները.

5. ՏԳՏԴ N (ԷՆ) խմբի 79.12 կոդով ներգնա զբոսաշրջային գործունեություն իրականացնող զբոսաշրջային օպերատորի վրա չեն տարածվում սույն՝ N 1 հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «դ» և «զ»-«ը» պարբերություններով սահմանված պահանջները:

3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆԸ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐ

6. Զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներին բավարարումը հավաստելու նպատակով

ՏԳՏԴ N (ԷՆ) խմբի 79.12 կոդով զբոսաշրջային օպերատորի գործունեություն իրականացնելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքին, ինչպես նաև «Զբոսաշրջության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանված պայմաններին և պահանջներին համապատասխան ներկայացնել նույն նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկատվությունն ու փաստաթղթերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.01.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ